



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

**ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

3 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ս. Թոփուզյանի  
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի  
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Սոնա Այվազյանի եւ Վահե Գրիգորյանի անհապական  
դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐՁԵՅ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝  
քաղաքացիներ Սոնա Այվազյանը եւ Վահե Գրիգորյանը 2011թ. սեպտեմբերի 19-ին դիմել են  
ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ վարչական  
դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի եւ 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ  
կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողները հիմնականում պնդում են, որ սույն վարչական գործով կայացված  
դատական ակտերով սահմանափակվել է իրենց՝ արդարադատության մարզելիության  
սահմանադրական իրավունքը:

Սույն անհարական դիմումով գործի քննությունն ամբողջությամբ ենթակա է մերժման, քանի որ առկա են դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված եւ օրենքով սահմանված ներքոհիշյալ հիմքերը:

1. Նախ՝ ամփառմեցի է արձանագրել, որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի՝ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման առկայությունը գործի քննության մերժման օրինական հիմք է:

Տվյալ դեպքում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ ընդունված է ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. սեպեմբերի 7-ի թիվ ՄԴՈ-906 որոշումը: Հիշյալ որոշմամբ, ՀՀ սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապարասխանող՝ որոշման մեջ արդահայրված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն գրամարանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլնի, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, **որոնց իրավունքները խախտվել են:**

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանադրականությունը դիմողները վիճարկել են նոյն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ: Տեղին է նկարել, որ առանց օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ըստ Էռլյան, սահմանադրախրավական վեճ չի առաջացնում:

Բացի դրանից, դիմողներն առանձնակի, բավարար իրավաբանական փաստարկներով պարզած կերպով չեն հիմնավորել օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը, ինչը դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է /«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասեր/: Ավելին, դիմոդները վիճարկելով մարդանշված իրավադրույթների սահմանադրականությունը՝ ըստ Էռլյան, բարձրացնում են դրանց կիրառման իրավաչափության հարցը:

Փաստորեն, դիմոդները փորձել են դատական ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավանորմերի սահմանադրականության խնդրին /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՄԴԱԾ-21 աշխարհագային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմա-

նադրական դադարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՌՌ սահմանադրական դադարանի թիվ 2 դադական կազմը

### **ՈՐՈՇԵՅ.**

Զաղաքացիներ Սոնա Այվազյանի եւ Վահե Գրիգորյանի անհագական դիմումով գործի քննությունը մերժել:



3 հոկտեմբերի 2011 թվականի  
ՍԴԿՈ/2-11